

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԽՈՌՎՈՒԹԻՒՆ

Խոռվելու պատճառը տկարութիւնն ու փոքրութիւնն են: Արդարեւ, ուժեղը կը վիճի, իր կամքը կը պարտադրէ ու կը յաղթէ հակառակորդին թէ՛ իրաւամբ եւ թէ՛ անիրաւ կերպով, իսկ տկարը գործնականօրէն դիմադրել չկարողանալով, մտքով կը խռովի, ամէն տեղ կը տրտնջայ ու կը զանգատի:


Բարեսէր մարդիկ զգուշօրէն կը հրաժարին չարերու հետ հաղորդակցութիւն ունենալէ եւ չեն ախորժիր անոնց հետ խօսակից կամ սեղանակից ըլլալ, որովհետեւ ոչ թէ զանոնք կ'ատեն, այլ՝ անոնց գործերը: Եւ այդպիսի դէպքերու մէջ խռովածութիւնը մարդերու հանդէպ չէ, այլ՝ անոնց գործերուն:

Խիստ մեծ խռովութիւններ կը յառաջանան չնչին բաներէ, ինչպէս մեծամեծ հրդեհներ՝ փոքրիկ կայծէ մը: Ուստի, ո՛վ որ կ'ուզէ բոլորին հետ հաշտ ու անխռով մնալ, թող նրբանրկատ ըլլայ մինչեւ մանրուկները, որպէսզի իր եւ ոեւէ մէկու միջեւ խռովածութիւն չծագի:

Կա՛յ արդեօք այնպիսի անգութ ու խստասիրտ մէկը, որ երբ անձէ մը խռովի՝ երբեք չ'ուզեր ներելով հաշտուիլ, մանաւանդ անոր հետ, որ խոնարհութեամբ կը խնդրէ, միջնորդ կը դրկէ եւ խաղաղութիւն կը հայցէ:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՊԼՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հայ եկեղեցոյ եօթը Խորհուրդներուն մէջ աստուածային ճառագայթող նկարագրով եւ Ս. Հոգւոյն ներգործութեամբ հրաշակերպուած խորհուրդն է Ս. ՀԱՂՈՐԳ-ՈՒԹԻՒՆԸ կամ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ:

Անիկա փառահեղ ոգեկոչում է Վերջին ընթրիքի յիշատակին, ուր Յիսուս ինքզինք մատուցեց առաքելներուն՝ ճշմարտելով Յովհաննէս Աւետարանիչին խօսքերը թէ՛ «Ով որ մարմինէս կ'ուտէ եւ արիւնէս կը խմէ՝ յաիտենական կեանք կ'ունենայ եւ ես անոր յարութիւն պիտի տամ վերջին օրը...» (Յովհաննէս 6.54):


ՇԱՐՔՈՒՄՆ ՏՈՒՆԵՐԸ

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2024	ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅԻ
ՇՆԱԹ, 13 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2024	ՏՕՆ ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ

ՃՐԱԳ ՇԱՐՔՈՒՄԵՐԸ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ քերթ
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2024

ԹԻՒ 1

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՄԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 6.8-8.2: Յհ. 12.24-26

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 12.24-26

Վատահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով, որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով, որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինծի ծառայողը:

Ս. ԾՆՈՒՆԴԸ

Մեծ Աստուածը ծնաւ մանուկի մը նման, որպէսզի ցոյց տար, թէ ինք կը սիրէ մանուկները, կը սիրէ թէ՛ հոգիով եւ թէ՛ տարիքով մանուկները (Մտ. 19.14): Հոգիով մանուկը՝ մեղքի ցեխէն զերծ հոգին է: Յիսուս մանուկին ծննդեան տօնը՝ տօնն է բոլոր մանուկներուն, թէ՛ հոգիով եւ թէ՛ տարիքով մանուկներուն: Ո՞ր ես մեր այն ծնողները, որոնք իրենց մանուկներուն կը սորվեցնեն, թէ Յիսուս մանուկը կը սիրէ զիրենք եւ, թէ իրենք ալ պէտք է Յիսուս մանուկը սիրեն: Աստուծոյ Որդին մանուկ եղաւ՝ իր անչափ սէրը արտայայտելու մանուկին հանդէպ, բայց նաեւ մեզ հրաւիրելու, որ աստուածահաճոյ դաստիարակութիւն ջամբենք մեր մանուկներուն: Քանի՞ ծնողներ ունինք այսօր, որոնք քրիստոնէական ճշմարիտ դաստիարակութիւն կը ջամբեն իրենց մանուկներուն, որոնց կը սիրէ Յիսուս, եւ որոնք իր սիրոյն համար ստեղծուած են:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ



Մատթեոս եւ Դուկաս Աւետարանիչները կը կը ներկայացնեն Յիսուսի Ծնունդը իր յարակից դէպքերով:

Օգոստոս Կայսրի հրամանագիրը՝ մարդահամար կատարելու համար, Բեթղեհէմ մէկ համեստ մտորին մէջ Մարիամի ծննդաբերութիւնը, հրեշտակներու փառաբանանքը երկինքի անհունին մէջ, հովիւներու այցը ծննալ Փրկչին, սնոգերու այցելութիւնը, Բեթղեհէմի մանուկներու ջարդը, քառասնօրեայ տաճար ընծայումը, եւ դէպի Եգիպտոս փախուստը:

Յիսուս մանուկի Ս. Ծննդեան եւ անոր մանկութեան առնչակից դէպքերն են ասոնք՝ յիշատակուած Ս. Աւետարաններուն մէջ:

Հայ Եկեղեցին Յիսուսի ծնունդն ու Սկրտութիւնը՝ որ է Աստուածայայտնութիւնը, միասնաբար կը սօսէ:

Առաջինը՝ մարգարէներու կողմէ գուշակուած Բանին մարմնացումն է, իսկ երկրորդը՝ անոր աստուածային բնութեան ճառագայթումը՝ Հօր Աստուծոյ կնքումով եւ Ս. Հոգիի աղանակերայ էջով:

Վերոյիշեալ միացեալ սօսը կը կազմէ մեր եկեղեցւոյ հինգ Տաղաւարներէն առաջինը:

Հարց.- Ինչո՞ւ կը խաչակնքեն ամեն ժամանակ եւ ի՞նչ նշանակութիւն ունի խաչակնքելը:

Պատասխան.-- Կը խաչակնքեն հետեւեալ ձեւով. կ'ըսեն յառու Հօր (աջ ձեռքի երեք մատները կը տանին դէպի ցաւալ), եւ Որդւոյ (ձեռքը կ'իջեցնեն դէպի վար) եւ Հոգւոյն(ձեռքը կը տանին ձախ կողմը) Սրբոյ (կը տանին դէպի աջ կողմը), Ամէն (ձեռքը բացած մատներով կը դնեն սրտի վրայ): Այսպէս կը խաչակնքէ նաեւ Հռովմէական (Կաթոլիկ) Եկեղեցին:

Խաչակնքելը կը նշանակէ.

- Վահան ընդդէմ սատանայական ներգործութիւններու:
- Կը յիշենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկարար մահը խաչի վրայ՝ մարդկութեան ազատագրման համար:
- Կը խնդրենք Աստուծոյ օգնութիւնը եւ ողորմութիւնը:
- Մենք այլեւս գոյութիւն չունինք աշխարհի չար գործութիւններու համար (խաչուած ենք) եւ կենդանի ենք միայն Յիսուսի Քրիստոսի համար:
- Չարը այլեւս գործութիւն չունի, քանի որ Յիսուս խաչուեցաւ մեզի համար եւ խաչի արիւնով մենք փրկուեցանք: Խաչակնքելով մենք զմեզ կը հաստատենք խաչի տակ, ուր մեռաւ մեր տէրը: Այսինքն՝ ես ուր ալ երթամ, ինչ ալ ընեմ, իմ տեղս այնտեղ է, ուր որ մեռաւ Յիսուսը՝ Գողգոթայի Խաչին տակ:
- Կը ցանկամ, որ ասկէ ետք իմ վրաս տպուի, արտապատկերուի Յիսուսը՝ այն ալ խաչը եղած(Ա. Կորնթ., 2,2):
- Կը ցանկամ, որ ասկէ ետք ինծի նայողները տեսնեն միայն մէկ բան, խաչեալ Յիսուսին:
- Երբ կը տանինք մեր ձեռքը դէպի վեր՝ կ'ուզենք ըսել, որ մեր միտքը, էութիւնը, գամուեցաւ խաչին վրայ, եւ թող ասկէ ետք Քրիստոսի միտքը գրաւէ մեզ:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

Յ Ի Ս Ո Ւ Ս Գ Ի Տ Է Մ Ե Ր Ն Ե Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ո Ւ Ն Մ Ա Մ Ի Ն

«Կը խղճամ այս բազմութեան, որովհետեւ ահա երեք օր է, որ մօտս են եւ ա՛լ ոչինչ ունին ուտելիք» (Մտթ. 15.32): Երեք օրէ ի վեր կիզիչ արեւին տակ հոծ բազմութիւն մը կը հետեւէր մարդոց Հովիին՝ Քրիստոսի: Սա ցոյց կու տար անոնց կամքին գորութիւնն ու նախանձախնդրութեան կրակը, ցոյց կու տար անոնց կապուածութիւնը Քրիստոսի ու անոր խօսքին: Քրիստոս գիտէր, որ անոնք երեք օրէ ի վեր իրեն հետ էին, գիտէր անոնց յոգնածութեան ու սպառած վիճակին մասին: Հոսկէ կը սորվինք այն՝ որ Քրիստոս գիտէ իր հետեւորդներուն կրած նեղութեան մասին: «Գիտեմ քու գործերդ, վաստակըդ եւ համբերութիւնդ» (Յլտ. 2.2): Ան մեր թափած արցունքները իր տիկին մէջ պահած է (Մղ. 56.8):

Ա Ս Տ Ո Ւ Ա Շ Մ Շ Ո Ւ Ն Չ

Երբ Աւետարան կը կարդաս, հաճոյք ու հրճուանք մի փնտռեր, ոչ ալ փայլուն միտքեր, այլ աշխատ տեսնել անմեղունակօրէն սուրբ ճշմարտութիւնը: Մի բաւարարուիր Աւետարանի անպտուղ ընթերցանութեամբ, այլ ջանա՛ կատարել անոր պատուիրանները: Աւետարանը կարդա՛ գործերով: Անիկա կեանքի գիրքն է, եւ պէտք է կեանքով կարդալ զայն:

(Իգնատի Բրեանյանինով):

Ե Թ Է Կ Ա Մ Ե Ր Բ Կ Ո Ւ Ջ Ե Ս ...

Տ Ի Ր Ո Ջ Ը Ը Ն Կ Ե Ր Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ք ու ք ոյ ուր ճ ամբ աներ ուղ մ է ջ Տ էր ու ան ջ զի ը: Առ ա կ 3.6

Ահա նոր տարի մը ու նոր ճամբայ մը, մոլթ ու անձանթ, բեռնաւոր անակնկալներով՝ ուրախ ու տրտում: Դժուարութիւններով ու յաջողութիւններով, վտանգներով ու խրթին հարցերով: Սակայն մի՛ վախնար երբեք: Կանգ ա՛ն պահ մը ու տես, թէ քու ապահովութեանդ համար ո՞վ է, որ քեզի հետ կը թեւակոխէ այս նոր ճամբուն մէջ: Անիկա քու Տէրդ է, լաւ ճանչցիր զԱյն: Ան քու Արարիչդ է եւ քու Փրկիչդ, ամենակարող ու ամենազէտ: Քեզի համար միշտ ու միայն բարին կամեցող, որուն շնորհքը կը բաւէ քեզի ամէն պարագայի համար:

Ահա մեծ խոստում մը այս Նոր Տարւան համար. «Տէրը քու առջեւդ պիտի երթայ ու Իսրայէլի Աստուածը քեզի թիկնապահ պիտի ըլլայ» (Ես. 52.12): Ո՛հ, ի՛նչ անխմանալի պատիւ է, որ թագաւորաց թագաւորը յօժարած է եւ իր մեծափառութեամբ զիջած է անձամբ քու առջեւդ երթալ եւ քու թիկունքիդ քով քեզի թիկնապահ կենայ: Ինչո՞ւ, ինչպէ՞ս: Ահա գաղտնիք մը մեծ եւ սքանչելի: Մի՛ վախնար, քեզի չարիք պիտի չի հասնի ու քու բնակարանիդ հարուած մը պիտի չի մօտենայ, որքան առեն՝ որ Ան քեզի իրրեւ պահապան կը կենայ:

Ճանչցիր զԱյն: Ճամբադ մոլթ է, սակայն ինչ փոյթ, կեանքի Արեւը քեզի հետ է: Անիկա քու ալ ձեռքիդ քով քու հովանիդ է, քու ալ ձեռքիդ կը բռնէ: Անոր հետ քարոզը բնաւ խաւարի մէջ պիտի չի մնայ:

Ուստի չի վայելեր, քեզի, որ այսօր տրտում սկսիս ճամբադ: Ան գիտէ, թէ ինչո՞ւ կը հրամայէ քեզի բոլոր սրտով ուրախ եւ գուարթ ըլլալ (Մով. 3.14) եւ բանի մը համար հոգ չընել (Փիլ. 4.6): Քանի որ ինք՝ բոլոր շնորհաց Աստուածը եւ բարեաց Աղբիւրը, քեզի հետ կը քայլէ միշտ: Միայն, թէ ճամբուդ ընթացքին «Անկէ զգուշացիր ու Անոր խօսքը մտիկ ըրէ՛, Անոր անհնազանդ մի՛ ըլլար (Ելից 23.20-21): Ահա այսպիսով պիտի ճանչնաս զԱյն եւ Անոր քաղցր ըլլալուն համը հետզհետէ աւելի պիտի առնես: